

Փիլիսոփայության մեջ, հիմնաւորելը կը զանազանուի պատճառաբանելէն, թէեւ անոնք մերձիմաստ եզրեր են: Օրինակ բարոյագիտութեան մէջ վարմունքի մը պատճառը, որ միշտ փորձառական է, բոլորովին կը տարբերի վարմունքի մը հիմնաւորումէն, որ այդ վարմունքին բանական հիմք կամ փաստարկում տալ կը նպատակադրէ:

Բարոյական վարմունքի պարագային, երբ երկընտրանքի մը առջեւ կը գտնուինք, կրնանք որոշել առաջին կամ երկրորդ տարբերակը: Սակայն այս որոշումը կամ վարմունքի ընտրութիւնը ինքնին բաւարար չէ, այլեւ պէտք է հիմնաւորել՝ թէ ինչո՞ւ ընտրեցինք վարմունքի այս կամ այն տարբերակը, որ մեզի համար *բարի*, *լաւ* կամ *ճիշդ* է:

Բարոյագիտութեան հիմնաւորման գլխաւոր հարցերէն մէկը բարի կամ լաւ (չար կամ վատ) հասկացութիւններն են, որոնք կրնան որպէս յարաբերա-կան արժէք ներկայանալ: Այլ խօսքով, շատեր կրնան օրինակ *բարին ու լաւը* տարբեր ձեւով հասկնալ կամ տարբեր արժեւորումներ տալ անոնց, (ինչպէս՝ լաւ - աւելի լաւ - լաւագոյն): Բարոյագիտութեան հիմնաւորման համար, սակայն, բաղձալի պիտի ըլլար, որ *բարի ու լաւ* (չար ու վատ) հասկացութիւնները յստակ իմաստ ու բնորոշում ունենային եւ բոլորին կողմէ հաւասարապէս եւ նոյն ձեւով ընդունուած ըլլային:

Բարոյագիտութեան հիմնաւորումը կարելի է երկու միջոցներով.-

- **Առաջին՝ աւանդական բարոյական սկզբունքներով,**

որոնց հիմքը ընդհանրապէս կրօնական վարդապետութիւններն են, ինչպէս է պարագան օրինակ՝ քրիստոնէական բարոյագիտութեան մէջ, ուր Աստուածաշունչ մատենը իր իւրայատուկ տեղը ունի. եւ

- **Երկրորդ՝ բնական (ոչ-աւանդական) բարոյական սկզբունքներով,**

որոնց հիմքը նոյնինքն մարդկային բնութիւնն է, իր բանականութեամբ եւ ինքնավարութեամբ: Այս սկզբունքով, պատմութեան ընթացքին, բարոյագետ-փիլիսոփաներու կողմէ մշակուած են զանազան հիմնաւորման ծրագիրներ, ինչպէս է պարագան՝ սկոտլանդացի փիլիսոփայ **Հյումի** (David Hume, 1711 – 1776 թ.) եւ գերման փիլիսոփաներ **Կանտի** (Immanuel Kant, 1724 – 1804 թ.) կամ **Շոպենհաուրի** (Arthur Schopenhauer, 1788 – 1860 թ.) մօտ:

Բարոյագիտութեան հիմնաւորման վերոյիշեալ բաժանումներու մասին, ինչպէս նաեւ ասոնց հետ առնչուած բարոյական *պայմանագրային տեսութեան* (Contractarianism) մասին, որոշ մանրամասնութեամբ, պիտի անդրադառնանք քիչ ետք:

